ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 343-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «11» «09» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կողք կողքի» ներառական կրթամշակութային հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Ն. Սարգսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման տող՝ «Ներառական նախագծեր ժամանակակից արվեստի ոլորտում») ծրագիր) (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Կողք կողքի» միջազգային ներառական երաժշտական արտ փառատոնը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել

ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-րդ կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 18000.0 հազար (տասնութ միլիոն) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. նոյեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվ
օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում
պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապվա
ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում է
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կողք կողքի» ներառական կրթամշակութային ՀԿ
ք.Երևան,Կառավարական 2 շենք	ք.Երևան, Արտաշիսյան 59 փ., բն.16
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ- ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011032878	Հ/Հ 220593350394000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02294408
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Հ. Հակոբյան	Ն. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«11» «09» 2023 թ.
N ՄՇԴ-343 2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Կողք-կողքի» միջազգային ներառական երաժշտական արտ փառատոնի

1	Կազմակերպության անվանում	«Կողք կողքի» ներառական կրթամշակութային հասարակական կազմակերպություն
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Արտաշիսյան փողոց 59 շ., բն. 16
3	Ծրագրի անվանում	«Կողք-կողքի» միջազգային ներառական երաժշտական արտ փառատոն
3.1	Բովանդակություն	«Կողք-կողքի» միջազգային ներառական երաժշտական արտ փառատոնի շրջանակներում կիրականացվի համերգներ, ներառական ներկայացում, ցուցահանդես, սեմինար և վարպետության դասեր ներառական ոլորտի հայաստանի և արտերկրի լավագույն մասնագետների և խմբերի մասնակցությամբ: **Սեմինարի** թեմատիկ ուղղվածությունը՝ ներառականություն, արտթերապիա և երաժշտաթերապիա: Սեմինարի ընթացքում հրավիրված մասնագետները կներկայացնեն ներառական ոլորտի մասնագիտական տարբեր թեմաներ, կիրականացվեն վարպետության դասեր, տեղի կունենա հարց ու պատասխան, քննարկումներ ծնողների և մասնագետների մասնակցությամբ: Սեմինարին կմասնակցեն Հայաստանում գործող վերականգնողական կենտրոնների ու մանկատների ներկայացուցիչները: Փառատոնի շրջանակներում կազմակերպված **համերգներին** կմասնակցեն հայ և արտերկրյա երաժիշտներ: **Ցուցահանդեսին** կներկայացվեն կենտրոնների սաների կողմից պատրաստված կավե աշխատանքները, գեղարվեստական աշխատանքները, զամբյուղներ, թևնոցներ, շարֆեր և այլ ձեռքի աշխատանքներ: **Գալա համերգին** կմասնակցեն հաշմանդամություն ունեցող անձինք և անվանի երաժիշտներ, ինչպես նաև ք. Գյումրիի, Սևանի, Գորիսի, Կապանի վերականգնողական կենտրոնի սաները:
3.2	Նպատակ	▪ Արվեստի և երաժշտության միջոցով տարածել մարդասիրություն և ապացուցել, որ հաշմանդանությունը դատավճիռ չէ և չի կարող խոչընդոտ հանդիսանալ, երբ անձը հնարավորություն ունի կատարելագործվելու ու

		ինքնաարտահայտվելու՝ արվեստի ցանկացած բնագավառում: Ծրագրում օտարերկրյա մասնագետների ներգրավվածությունը լայն հնարավորություններ կընձեռնի ոլորտի զարգացման, Հայաստանի մասնագետների վերապատրաստման համար, ինչպես նաև ծնողներին հնարավորություն կտա սեմինարների և վարպետած դասերի միջոցով զարգացնել և կատարելագործել ունեցած գիտելիքները: ▪ Ծրագիրը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձի ստեղծագործական կարողության զարգացմանը, հարթակ կհանդիսանա հաշմանդամություն ունեցող տաղանդավոր անձանց հասարակության մեջ ինտեգրվելուն: Արվեստի միջոցով հասարակության մեջ հանրայնացնել ներառական մտածողությունը: Փառատոնի ընթացքում երեխաները և դեռահասները հնարավորություն կունենան վարպետության դասերի մասնակից լինել, փորձ ձեռք բերել անվանի երաժիշտների հետ շփման ընթացքում: ▪ Նախագիծը կարող է նպաստել հաշմանդամություն ունեցող երիտասարդների հետագա գործունեությանը՝ մասնագիտական կողմնորոշման մեջ: Նախագծում շեշտը դրված է մարդասիրություն ու հանդուրժողականություն սերմանելու հայ երիտասարդության մեջ: Հասարակության կողմից ճանաչված մարդկանց ներգրավվածության միջոցով հնարավորինս հանրայնացնել ներառական մտածողությունը:
3.3	Անցկացման ժամկետ	2023 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներ
3.4	Անցկացման վայր	Երևան
3.5	Ակնկալվող արդյունքներ	• Հաշմանդամություն ունեցող շնորհաշատ երեխաների և դեռահասների բացահայտում, մասնագիտական ունակությունների զարգացում • Բարևնպաստ միջավայրի ձևավորում, մասնակիցների գիտելիքների ընդլայնում • Մասնակիցների մասնագիտական կոզմորոշում • Անվանի երաժիշտների ներգրավվածության միջոցով հնարավորինս զարգացնել և հանրայնացնել ներառական մտածողությունը • Ներառական, կրթական, վերականգնողական տարբեր կազմակերպություններին համախմբում

		• Տարբեր ոլորտների մասնագիտների միջև փորձի փոխանակում, • Ներառական կրթության ոլորտի դերակայության բարձրացում • Միջազգային փորձի ուսումնասիրում
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	• 100 մասնակից • 16 միջազգային մասնագետ և մասնակից • 2 համերգ • 1 ցուցահանդես • 2 սեմինար և վարպետաց դասեր • 100 կամավոր

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Կողք կողքի» ներառական կրթամշակութային ՀԿ
ք.Երևան, Արտաշիսյան 59 փ., բն.16
«ԱԿԲԱ- ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220593350394000
ՀՎՀՀ 02294408

Նախագահ՝

_____ Ն. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«11» «09» 2023 թ.
N ՄԵԴ 343 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Կողք-կողքի» միջազգային ներառական երաժշտական արտ փառատոնի իրականացման ծախսերի

N	Ծախսատեսակների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
1.	Կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝				1,890.0
1.1	ծրագրի հեղինակ	հատ	1	400,000	400.0
1.2	գեղարվեստական մասի պատասխանատու	հատ	1	300,000	300.0
1.3	տեխնիկական մասի պատասխանատու	հատ	1	250,000	250.0
1.4	համակարգող	հատ	2	200,000	400.0
1.5	ֆինանսական համակարգող	հատ	1	180,000	180.0
1.6	հաղորդավար	հատ	2	180,000	360.0
2.	Կեցության և սննդի ապահովման ծառայություններ, այդ թվում՝				4,224.0
2.1	հյուրանոցային ծառայություն՝ (օտարերկրյա մասնակիցներ) 16 մարդ x 6 օր	մարդ/օր	96	36,000	3,456.0
2.2	սննդի ծառայություն՝ (օտարերկրյա մասնակիցներ) 16 մարդ x 6 օր	մարդ/օր	96	8,000	768.0
3	Կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցման սակագին, այդ թվում՝				380.0
3.1	Հով.Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի մեծ դահլիճ(բացման համերգի համար)	օր	1	220,000	220.0
3.2	Հով.Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի փոքր դահլիճ(սեմինարների համար)	օր	2	80,000	160.0
4	Լուսային տեխնիկայի ապահովման, մոնտաժման,սպասարկման և ապամոնտաժման ծառայություններ, այդ թվում՝				2,722.0
4.1	լուսային կառավարման վահանակ՝ Lighting console	հատ	1	240,000	240.0
4.2	շարժական լուսարձակներ	հատ	22	35,000	770.0
4.3	լուսարձակ ԼԵԴ	հատ	36	12,000	432.0
4.4	ԼԵԴ էկրան 30-36 քմ	հատ	1	1,080,000	1,080.0
4.5	լուսային տեխնիկայի տեղափոխման, մոնտաժման,ապամոնտաժման և սպասարկման աշխատանքների ծառայություն	հատ	1	200,000	200.0
5	Ձայնային համակարգի ապահովման,մոնտաժման,սպասարկման և ապամոնտաժման ծառայություններ, այդ թվում՝				1,345.0
5.1	ձայնային կառավարման վահանակ	հատ	1	400,000	400.0
5.2	ձայնային համակարգ, բարձրախոս	հատ	8	30,000	240.0
5.3	բեմի ձայնային համակարգ, մոնիտոր	հատ	1	25,000	25.0
5.4	խոսափող փափուկ	հատ	8	10,000	80.0
5.5	ձայնային տեխնիկայի տեղափոխում, մոնտաժում, ապամոնտաժում և սասասարկում	հատ	1	400,000	400.0
5.6	պրոյեկտոր՝ պրոյեկցիոն էկրան, տեղափոխում և սպասարկում 2 օր	հատ	1	200,000	200.0
6	Բեմային կոնստրուկցիայի մոնտաժման և ապամոնտաժման աշխատաքների ծառայություններ, այդ թվում՝				2,150.0
6.1	բեմահարթակ 12 մ x 10 մ x 2 - 4 մ	հատ	1	850,000	850.0
6.2	բեմի ծածք	հատ	1	400,000	400.0
6.3	բեմի մոնտաժման և ապամոնտաժման աշխատաքներ	հատ	1	600,000	600.0
6.4	բեռնափոխադրում (մեծ բեռնատար)	հատ	1	300,000	300.0

	Տրանսպորտային ծառայություններ, այդ թվում՝				305.0
7.1	ավտոբուս՝ Երևան-Գյումրի-Երևան	երթ	2	100;000	200.0
2.2	մարդատար մեքենա՝ (ներքաղաքային փոխադրումներ Երևանում)	երթ	30	3,500	105.0
8	Նկարահանման ծառայություններ, այդ թվում՝				910.0
8.1	համերգի նկարահանում, Full HD ֆորմատ	հատ	1	490,000	490.0
8.2	ֆոտո նկարահանում	օր	4	35,000	140.0
8.3	ինֆորմացիոն հոլովակի պատրաստում (5-6 րոպե)	հատ	1	280,000	280.0
9	Գովազդային և տպագրական ծառայություններ, այդ թվում՝				1,074.0
9.1	գովազդային նյութերի դիզայն	հատ	1	270,000	270.0
9.2	բաների տպագրություն 100 քմ x 3.0 հ. դ. (5 հատ)	հատ	1	300,000	300.0
9.3	վահանակ	հատ	1	100,000	100.0
9.4	պատվոգիր 70 x 0,8 հ. դ.	հատ	1	56,000	56.0
9.5	բեյջ 70 x 0,4 հ. դ.	հատ	1	28,000	28.0
9.6	հրավիրատոմս 300 x 0,4 հ. դ.	հատ	1	120,000	120.0
9.7	էլեկտրոնային հարթակում ծրագրի իրազեկում, տարածում	հատ	1	200,000	200.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				15,000.0
	ԱԱՀ*				3,000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**18,000.0**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Կողք կողքի» ներառական կրթամշակութային ՀԿ
ք.Երևան, Արտաշիսյան 59 փ., բն.16
«ԱԿԲԱ- ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22059335039400
ՀՎՀՀ 02294408
Նախագահ՝
Վ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«11» «09» 2023 թ.
N ՄՇԴ-343-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

<< ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«11» «09» 2023 թ.
N ՄՇԴ-343-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝